

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/6**

ք. Երևան

«10» 02 2022թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ՀԱՐՈՍԱ» ՍՊԸ-ն, (այսուհետ՝ Կատարող) ի դեմս տնօրեն Ռ. Ադամյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Երևանի Միքայել Նալբանդյանի անվան հ.33 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Երևանի Խանզադյանի անվան հ.184 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Երևանի Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Երևանի Սիլվա Կապուտիկյանի անվան թիվ 145 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճների կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:**

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Եթե պայմանագրի N 5 հավելվածով (Աղյուսակներ N 1 և N 2) կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի համար սահմանված երաշխիքային ժամկետների ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա տեխնիկական հսկողություն իրականացնող անձը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 25 700 000 (քսանհինգ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ, ընդ որում՝

- «Երևանի Միջայել Նալբանդյանի անվան հ.33 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն-7 200 000 (յոթ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ,

- «Երևանի Խանզադյանի անվան հ.184 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն-7 300 000 (յոթ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ,

- «Երևանի Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն-6 700 000 (վեց միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ,

- «Երևանի Սիլվա Կապուտիկյանի անվան թիվ 145 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն- 4 500 000 (չորս միլիոն հինգ հարյուր հազար ՀՀ դրամ):¹

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները պայմանագրում նշված Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 25%-ի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել է Կատարողին բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման հաշվետվության ներկայացման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

¹ Վճարման ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախարեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում երաշխիքի ձևով ներկայացրած ապահովման ժամկետի երկարաձգումը հավաստող փաստաթղթի առկայությամբ):

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 3, N 3.1, N 4 և N 5 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված են ֆինանսական միջոցներ, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար



Սկրտյան

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

<<ԱՐՈՍԱ>> ՍՊԸ
ք. Երևան, Կ. Ունեցու 31/4
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ խորհրդային մ/6
Հ/Հ 163078301542
ՀՀՎՀ 00803381

Տնօրեն



Ռ. Աղամյան

Handwritten signatures in blue ink at the bottom of the page.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	գնման առարկայի գինը /ՀՀ դրամ	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	71351540/508	դրամ	7 200 000	25 700 000	1	ք. Երևան	Շինմոնտաժային աշխատանքների ավարտի հետ
	71351540/509		7 300 000		1		
	71351540/510		6 700 000		1		
	71351540/511		4 500 000		1		

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1	Շինարարության որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման բնութագիրը
	Աշխատանքների որակի /շինմոնտաժային աշխատանքների կատարման բոլոր փուլերում/ տեխնիկական հսկողության /այսուհետ՝ Հսկողություն/ խորհրդատվական ծառայության մատուցում՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշման, ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ թիվ 44 հրամանի, ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N11-Ն հրամանի համաձայն
2	Հսկողության ենթակա աշխատանքների անվանումը
	Երևանի Միքայել Նալբանդյանի անվան հ.33 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Երևանի Խանզադյանի անվան հ.184 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Երևանի Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Երևանի Սիվա Կապուտիկյանի անվան թիվ 145 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճների կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն՝ համաձայն ծավալաթերթ-նախահաշվի:
3	Տեխնիկական առաջադրանք
	Տեխնիկական հսկողության իրականացում Պատվիրատուի կողմից սահմանվող պարտավորությունների համաձայն Հավելված 4-ի
	Առանձին տեսակի շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության և կատարողական ակտերի ներկայացման ապահովում հիմնական լիցենզիային կից ներկայացվող ներդիրներում ընդգրկված մասնագետների միջոցով և գրավոր հաստատմամբ՝ ճարտարագետ-շինարարի, ճարտարագետ-էներգետիկի, ճարտարագետ-էլեկտրիկի, ճարտարագետ-հիդրոտեխնիկի կողմից՝ յուրաքանչյուր իր կողմից վերահսկման ենթակա շինաշխատանքների համար
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով կատարվող աշխատանքների համապատասխանության ապահովում նախագծային լուծումներին, շինարարական նորմերին ու կանոններին
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով օգտագործվող նյութական ռեսուրսների որակը հավաստող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև օգտագործվող նյութերը, իրերը և կառուցվածքների որակը, աշխատանքների կատարման տեխնոլոգիաները ստանդարտներին, տեխնիկական և նորմատիվ փաստաթղթերի այլ պահանջներին համապատասխանության ապահովում
	Հսկողական ստուգման միջոցով իրականացվող աշխատանքների կատարման ժամկետների համապատասխանության, ինչպես նաև թերությունների բացահայտման և վերացման ապահովում

	<p>Հսկողական չափազորությունների միջոցով փաստացի կատարված շինմոնտաժային աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների և հաշվարկների համապատասխանության ապահովում, ամենամսյա հաշվետվությունների ներկայացում: Հաշվետվությունները պետք է ներկայացվեն ոչ ուշ քան շինարարական աշխատանքները սկսելու օրվան հաջորդող յուրաքանչյուր ամսվա մինչև ամսի 5-ը:</p> <p>Ընդ որում, առանձին տեսակի շինարարական աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունը մատուցվում է պատասխանատու անձանց՝ համապատասխան որակավորմամբ մասնագետ-հսկիչների կողմից:</p>
	<p>1. Օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի ամենօրյա ռեժիմով՝ շինարարական հրապարակում պատասխանատու անձանց անմիջական մասնակցությամբ:</p> <p>2. Օբյեկտի ինժեներական համակարգերի կառուցման նկատմամբ հսկողությունը պետք է իրականացվի հաստատված նախագծով նախատեսված տեխնոլոգիական հաջորդականությամբ համապատասխան և տվյալ աշխատանքների համար սահմանված ժամանակահատվածում:</p> <p>3. Օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության կազմակերպությունը (պատասխանատու- հսկիչը, խորհրդատուն) պետք է սեփական ռեսուրսներով և միջոցներով իրականացնի կառուցվող օբյեկտի կառուցվածքների կամ նրանց առանձին մասերի (այդ թվում սարքավորումների, համակարգերի, ցանցերի և սարքերի) լաբորատոր փորձարկումները և նմուշառումները, ինչպես նաև ապահովի դրանց արդյունքների ներկայացումը Պատվիրատուին՝ ամսական հաշվետվությունների և/կամ շինարարական ակտերի հետ ներկայացվող առանձին հաշվետվությունների տեսքով:</p> <p>– Լաբորատոր փորձարկումների քանակը, ձևերը և մեթոդաբանությունը պետք է իրականացվեն համաձայն պատվիրատուի պահանջի և ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի:</p> <p>– Նշված փորձարկումները պետք է ապահովվեն տվյալ օբյեկտի համար նախատեսված փորձարկման ենթակա աշխատանքների և առանձին տեսակի նյութերի ամբողջ ծավալը:</p> <p>4. Օբյեկտի ավարտից հետո՝ խորհրդատուն պետք է ներկայացնի շինաշխատանքների ամբողջ ընթացքի վերաբերյալ ամփոփ հաշվետվություն և եզրակացություն այն մասին, որ օբյեկտը կառուցվել է ՆՆՓ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:</p>
	<p>Կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում</p>
	<p>Պատվիրատուին ներկայացվող ամսական հաշվետվությունները պետք է պարունակեն տեղեկատվություն կապալառուի /շինարարական կազմակերպության/ շինարարական աշխատանքներ իրականացնելու անկարողության մասին՝ նշելով չաշխատած օրերի քանակը, դրանց պատճառները, եթե այդպիսիք առկա են:</p>
<p>Ծառայության մատուցման ժամկետը</p>	
<p>Սկիզբը</p>	<p>Ավարտը</p>
<p>Շինարարական աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման համար կնքված պայմանագրերի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրը</p>	<p>Շինմոնտաժային աշխատանքների ավարտի հետ:</p>

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ ՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

<<ԱՐՈՍԱ>> ՍՊԸ
ք. Երևան, Կ. Ուլենցու 31/4
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ խորհրդային մ/6
Հ/Կ 163078301542
ՀՀԿԿ 00803381

Տնօրեն

Ռ. Աղամյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

Ծառայության մատուցման մեթոդաբանության մասին

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Նկարագիրը
1	2	3
1	Հողային աշխատանքներ	Տարածքի համահարթեցման նիշերի ստուգում, փաստացի գրունտների զննում և ստուգում, շինության հիմքերի խրամուղիների ստուգում
2	Բետոնային աշխատանքներ	Բետոնի որակի ստուգում համապատասխան նախագծի
3	Ամրանային աշխատանքներ	Ամրանների ամրակապում համաձայն նախագծային լուծումների
4	Քարի շարվածք	Համաձայն նախագծի
5	Հարդարման աշխատանքներ	Նյութերի և հարդարման աշխատանքների որակի վերահսկում
6	Ինժեներական ցանցեր	Համապատասխան նախագծային լուծումների
7	Ասֆալտաբետոն	Ասֆալտբետոնի դասի և խտության համապատասխանություն ըստ նախագծի
8	Փորձարկումներ և հսկողության գրաֆիկ	Համաձայն գրաֆիկի
9	Աշխատանքների ընդունում	Համաձայն կատարված աշխատանքների, հսկիչ չափագրությունների և հանձնման ընդունման ակտերի

«ԵՐԵՎԱՆԻ ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.33 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՁԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.184 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ԵՐԵՎԱՆԻ Ա. ԵՐՁՆԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 118 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ԵՐԵՎԱՆԻ ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 145 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՆՈՐ ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Նախաբան

Երևանի թիվ 33 դպրոցը գտնվում է Նար Դոս փողոցի հարևանությամբ, իսկ նոր սպորտ դահլիճը նախագծվել է դպրոցի բակում:

Ըստ նախագծի 24 x 15 մ չափերով դահլիճի հարևանությամբ նախագծվել են երկահարկանի հանդերձարանները, սանհանգույցները, ցնցուղարանները, մարզագույքի պահեստը, մարզչի սենյակը ընդհանուր միջանցքը, տրիբունաները, 100 տեղերով բժշկի կաբինետ ու սանհանգույց՝ չորս հոգու համար:

Կառույցի արտաքին պատերը նախատեսված են ուղղանկյուն թեթև բետոնե բլոկներով, տանիքի ծածկը իրականացվում է սենդվիչ պանելներով:

Երևանի թիվ 184 դպրոցը գտնվում է Գուսան Շերամի փողոցի հարևանությամբ, դպրոցի նոր սպորտ դահլիճը նախագծվել է դպրոցի բակում: Նախատեսվում է տաքանցում կապելով մարզադահլիճի երկրորդ հարկը գործող դպրոցի երկրորդ հարկին: Ըստ նախագծի առաջին հարկում 24 x 15 մ չափերով դահլիճի հարևանությամբ նախագծվել են հանդերձարանները, սանհանգույցները, ցնցուղարանները, մարզագույքի պահեստը, մարզչի սենյակը ընդհանուր միջանցքը ու դեպի երկրորդ հարկ տանող աստիճանահարթակը: Երկրորդ հարկում նախագծվել են տրիբունաները, 100 տեղերով բժշկի կաբինետ ու սանհանգույց՝ չորս հոգու համար:

Կառույցի արտաքին պատերը նախատեսվում են ուղղանկյուն թեթև բետոնե բլոկներով, տանիքի ծածկը իրականացվում է սենդվիչ պանելներով :

Երևան քաղաքի Ա. Երզնկյանի անվան թիվ 118 ավագ դպրոցը գտնվում է Արզումանյան 8 հասցեում: Այն հիմնադրվել է 1960-ական թվականներին: Նախագծով նախատեսվում է գոյություն ունեցող մարզադահլիճի քանդում և նորի կառուցում: Նոր մասնաշենքի առանցքային չափերն են 15x20 մ: Մարզադահլիճը նախատեսվում է իրականացնել մետաղական կոնստրուկցիաներից, պատերը և տանիքը սենդվիչ պանելներից:

Երևան քաղաքի Ս. Կապուտիկյանի անվան թիվ 145 ավագ դպրոցը գտնվում է Հ. Էմինի 8 հասցեում: Այն կազմված է երկու մասնաշենքերից, որոնք իրար հետ կապվում են անցակառույցով:

Գոյություն ունեցող մարզադահլիճի շենքը կառուցվել է 1969-ական թվականներին: Նախատեսվում է գոյություն ունեցող մարզադահլիճի քանդում և նորի կառուցում: Նոր մասնաշենքի առանցքային չափերն են 11x22 մ: Մարզադահլիճը նախատեսվում է իրականացնել մետաղական կոնստրուկցիաներով, պատերը և տանիքը սենդվիչ պանելներից, բարձրություն 6մ :

Համալիր շինարարական աշխատանքները ներառում են՝

Համաշինարարական աշխատանքներ, որն իր հերթին ներառում է հողային, ե/բ կառուցվածքներ, տանիք, արտաքին և ներքին հարդարման, ջեռուցման, օդափոխության տաք և սառը ջրի մատակարարման ցանց, լուսավորման ցանց, կոյուղի, հրդեհի ահազանգման համակարգի կառուցման աշխատանքներ:

Նպատակը

Խորհրդատվական ծառայությունների նպատակն է՝ իրականացնել դպրոցի շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն և որակի վերահսկում:

Որակի վերահսկման կարևոր նպատակն է՝ ապահովել աշխատանքների կատարումը Պայմանագրի գծագրերին և մասնագրերին համապատասխան:

Տեխնիկական հսկողության ժամանակ կապահովվի շինարարական աշխատանքների փաստացի ձևակերպված որակի վերահսկում, իսկ շինարարական աշխատանքների պայմանագրերի շրջանակներում վճարումներն կիրականացվեն Պատվիրատուի համար ընդունելի որակով կատարված փաստացի ծավալների դիմաց:

Կապահովվի նաև շինարարական աշխատանքների համապատասխանությունը ՀՀ շինարարական նորմերին :

Ծառայությունների շրջանակները

Մեր կազմակերպությունը իր ծառայությունների մատուցման սկզբնական փուլում նախատեսում է մանրակրկիտ ուսումնասիրել Պատվիրատուի կողմից տրամադրած բոլոր նախագծային նյութերը և գծագրերը:

Աշխատանքների սկզբնական փուլում կազմակերպությունը իր թիմով կձանոթանա երկու շինարարական պայմանագրերի կառուցապատվող տեղամասերին և մանրամասն կուսումնասիրի ստորագրված շինարարական պայմանագրերը, այդ թվում՝ պայմանագրերի պայմանները, գծագրերը, տեխնիկական մասնագրերը (հատուկ ուշադրություն դարձնելով կոնստրուկցիաների հանգույցներին և բետոնի ու շինարարական նյութերի որակին), բացատրական ծանոթագրությունները, աշխատանքների ծավալների ցուցակները, միավոր դրույքաչափերը, շինարարության ժամանակացույցները:

Որակի վերահսկման կարևոր նպատակն է ապահովել աշխատանքների կատարումը Պայմանագրի գծագրերին և մասնագրերին համապատասխան:

Շինարարության մեկնարկի նախապատրաստական աշխատանքներից անմիջապես հետո մեր թիմը իր Կապալառուի հետ կիրականացնի նախագծային լուծումներին առանձնահատուկ ուշադրություն դարձնելով նիշերին:

Տեխնիկողության և Կապալառուի միացյալ թիմը կիրականացնի հողի մակարդակի սկզբնական պրոֆիլի հանույթ, որը կօգտագործվի ծավալները որոշելու համար:

Մեր խումբը կվերահսկի կառուցվածքների տեղադրման և նախագծով պահանջվող բոլոր այլ աշխատանքների կատարումը:

Շինարարության որակի վերահսկումը երկար և պատասխանատու գործընթաց է, որը պահանջում է ուշադիր ստուգումներ, կատարվող աշխատանքների գրառումներ, ծավալների հաշվարկներ, կատարված աշխատանքների համապատասխանության ստուգումներ նախագծային ծավալների և լուծումների հետ:

Տեխնիկական հսկողության աշխատանքները կիրականացվեն համաձայն ՀՀ Քաղաքաշինության Նախարարության «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ»-ի:

Տեխնիկական հսկողության իրականացման ժամանակ մեր կազմակերպությունը նախատեսում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

-Ստուգել շին.հրապարակ ներկրվող և շինարարական աշխատանքներում օգտագործվող բոլոր նյութերի, սարքավորումների և կոնստրուկցիաների (երկաթբետոնյա կոնստրուկցիաներ, մետաղական խողովակներ) որակը հավաստող փաստաթղթերի առկայությունը և նրանց համապատասխանությունը նախագծին, տեխնիկական մասնագրերին:

- Ստուգել ամրանների և ամրալարերի համապատասխանությունը տեխնիկական մասնագրերում նշվածներին:

- Հաշվարկել փաստացի փորված խրամուղիների հողային աշխատանքների ծավալները:

- Ստուգել կառուցվածքների կաղապարամածերի և ամրանների միացումների սխեմաները, վահանների մակերեսների մաքրությունը և տեղադրման ուղղությունները:

Տեխնիկական հսկողության կարևոր խնդիրներից է բերոնային և երկաթբետոնային աշխատանքների որակի ստուգումը, հատկապես բետոնի խառնուրդի որակի ստուգումը և նրա համապատասխանության որոշումը նախագծով նախատեսված բետոնի որակի տվյալների հետ(բետոնի ամրություն B, ջրանթափանցելիություն W, սառցադիմացկունություն F):

Բետոնը գործարանից կամ բետոն արտադրող հանգույցից ստանալու դեպքում Կապալառուից կպահանջվի ներկայացնել տվյալ արտադրական հանգույցի համապատասխանության սերտիֆիկատը: Համապատասխանության սերտիֆիկատի առկայության դեպքում միայն տեղնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունը կտա համաձայնություն տվյալ տեղից բետոն ստանալու:

Ստացվող յուրաքանչյուր բետոնաբաժնի համար կպահանջվի **բետոնի անձնագիրը**, որտեղ նշվում է բետոնի մակնիշը, նրա կազմը բաղադրիչների կշիռներով, արտադրման ժամանակը, օգտագործած հավելանյութի պլաստիֆիկատորի) մակնիշը, դյուրադրիելիությունը (կոնի նստվածքը):

Բետոնը տեղում պատրաստելու դեպքում կկատարվի բետոնի բաղադրիչների քաշի որոշման աշխատանքները, պարզելու համար ավազի, լցանյութերի, ջրի, ցեմենտի չափման ճշտությունը տեխնիկական մասնագրերում նշված չափաբաժինների համապատասխանությունը որոշելու համար: Կստուգվեն նաև օգտագործվող հավելանյութերի (պլաստիֆիկատորների) համապատասխանությունը տեխնիկական մասնագրերում նշվածներին:

Տեղադրվող բետոնի ամրությունը ստուգելու համար կվերցվեն 10սմ x10 սմ x10սմ բետոնի խորանարդիկներ, իսկ ջրանթափանցելիությունը W որոշելու համար h=15 սմ , d=15 սմ գլանային նմուշներ, որոնք պայմանագրի համաձայն կուղարկվեն լաբորատոր փորձարկումներ իրականացնելու և բետոնի ամրությունը B և ջրանթափանցելիությունը W նախագծի պահանջներին համապատասխանությունը որոշելու համար:

Տեխնիկական հսկողության ժամանակ հատուկ ուշադրություն կդարձվի **բետոնի տեղադրմանը ձմեռային ամիսներին**, մասնավորապես, կիրառվող հակասառեցուցիչ (անտիֆրիզ) և այլ պլաստիֆիկատորների համապատասխանությանը, կաղապարամածերում դրական ջերմաստիճանի պահպանման համար Կապալառուի կողմից իրականացվող միջոցառումներին: Ձմեռային պայմաններում բետոնային աշխատանքների ժամանակ պարտադիր կչափվի բետոնային խառնուրդի ջերմաստիճանը տեղադրումից առաջ, ինչպես նաև դրսի օդի ջերմաստիճանը: Ընդհանուր առմամբ բետոնային աշխատանքների որակի տեխնիկական հսկողության էական խնդիրներից է նաև **բետոնի տեղադրումից հետո նրա խնամքը**՝նպատակ ունենալով պաշտպանել տեղադրված բետոնը ձմեռային ցուրտ ժամանակ սառեցումից, իսկ ամռան շոգ ժամանակ՝ գերտաքացումից, **նաև խուսափելու համար բերոնի ջերմաստիճանային բնույթի ճաքերի առաջանալուց:**

Տեխնիկական հսկողության կարևորագույն խնդիրներից է նաև Կապալառուի կողմից **ծածկած աշխատանքների** ճիշտ գնահատումը և ընդունումը, որը կկատարվի հեղինակային հսկողության հետ համատեղ:

Խորհրդատուն կհետևի Կապալառուի շինարարության մեթոդներին և եթե համոզված է, որ կիրառվող մեթոդը կբերի կամ բերում է աշխատանքի ցածր որակ, ապա դաշտային տեսուչը անհապաղ կահագանգի Կապալառուին, պահանջելով ընտրելու աշխատանքների **բարձր որակը ապահովող մեթոդներ**: Եթե Կապալառուն չի փոխում իր մեթոդները, ապա դաշտային տեսուչը կահագանգի տեխնիկական հսկողության տեղամասի պետին, որի միջամտությունն էլ արդյունք չտալու դեպքում կտեղեկացվեն տեխնիկական հսկողության ղեկավարը և Պատվիրատուի ճարտարագետը՝ որոշում կայացնելու և անհրաժեշտության դեպքում շինարարությունը դադարեցնելու համար:

Շինարարության որակի արդյունավետ վերահսկումն ապահովելու նպատակով Խորհրդատուի խումբը կվարի շինարարության օրագիր, տեսչական գնումների հաշվետվություններ և գրառումներ՝ շինարարության առաջընթացը և աշխատանքների կատարողականը ճիշտ արտացոլելու համար:

Դաշտային տեսուչը յուրաքանչյուր օր կգրանցի հետևյալ տեղեկությունները՝

- Շինարարության հերթականությունը,
- Գծագրերի ուղղումներ,
- Շինհրապարակում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները,
- Եղանակային և հիդրոլոգիական պայմանները, անբարենպաստ եղանակային պայմանների տևողությունը,
- Շինհրապարակում գտնվող բանվորների, սարքավորումների թիվը և նյութերի քանակը, սարքավորումների պարապուրդը, գույքի վնասումը,
- Բոլոր նմուշառությունները, փորձարկումների և հետազոտությունների արդյունքները,
- Չափագրումների տվյալները, հողի սկզբնական նիշեր և այլն,
- Անվտանգության տեխնիկայի ուսուցումը և կիրառումը, մարդկանց մարմնական վնասվածքներ,
- Վերահսկող և այլ պաշտոնատար անձանց այցելությունները:

Տեխնիկական հսկողության դաշտային տեսուչը (տեղամասի պետը) պարտադիր ձևով կմասնակցի պետական քաղաքաշինական հսկողության և այլ լիազորված մարմինների կողմից անցկացվող շինարարության որակի ստուգումներին և թերությունների հայտնաբերման կամ դիտողությունների դեպքում կհետևի դրանց ժամանակին վերացմանը:

Տեխնիկական հսկողության ղեկավարը պարբերաբար կանցկացնի խորհրդակցություններ տեխ.հսկողության խմբի հետ, կքննարկվեն և ի հայտ կբերվեն որևէ օբյեկտում հայտնաբերված թերությունները, որոնք պատճառ են դառնում ցածր որակի աշխատանքների, միջոցառումներ կձեռնարկվեն նմանատիպ թերությունները այլ օբյեկտներում չկրկնվելու համար: Անհրաժեշտության դեպքում Տեխնիկական հսկողության ղեկավարը տեխ.հսկողության որոշ անդամների հետ կկատարի համայցեր որոշ օբյեկտներ՝ առաջավոր շինարարական տեխնոլոգիաների փորձի փոխանակման և շինարարական աշխատանքների թերությունների բացառման նպատակով:

Ինչպես ցույց է տալիս Խորհրդատուի տեխնիկական հսկողության փորձը, շինարարության ընթացքում կարող է անհրաժեշտություն առաջանալ կատարելու փոփոխություններ սկզբնական գծագրերում կամ կատարել լրացուցիչ աշխատանքներ: Լրացուցիչ աշխատանքների ընդգրկումը կամ նախագծերի փոփոխությունը կուղեկցվեն փոփոխված պատվերի ներկայացմամբ:

Նախագծում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում հարցերը համատեղ կքննարկվեն Կապալառուի և տեխնիկական հսկողության խմբի ղեկավարի կողմից և կներկայացվեն Պատվիրատուի համաձայնեցմանը:

Տեխնիկական հսկողության կողմից կվերահսկվի Կապալառուի Կողմից Պատվիրատուին ներկայացված Աշխատանքների Ժամանակացույցը և Աշխատանքային Պլանը:

Համաձայն առաջադրանքի պայմանների, տեխնիկական հսկողության պարտականությունների մեջ է մտնում շինարարության Կապալառուի կողմից «Բնապահպանական կառավարման պլան» ԲԿՊ-ի իրականացման վերահսկողությունը, այն է՝ վերահսկել, որպեսզի Կապալառուն շինարարական աշխատանքների ընթացքում իրականացնի անհրաժեշտ միջոցառումներ՝ յուրաքանչյուր տեղամասում և

դրանց շրջակայքում բնական և սոցիալական միջավայրին հասցրած հնարավոր վնասից խուսափելու կամ նվազեցնելու համար:

ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հողային աշխատանքների հետ կապված հետազոտությունները և լաբորատոր փորձարկումները միտված են ստուգելու և հավաստելու կատարված աշխատանքների

համապատասխանելիությունը հաստատված նախագծերին, տեխնիկական ասնագրերին և մասնավորապես ծրագրի երկրաբանական հաշվետվության առաջարկություններին: Գրունտը, որպես փոփոխական նյութ շատ զգայուն է խոնավության տատանումների նկատմամբ, և կարիք ունի հատուկ ուշադրության նախագծա-նորմատիվային փաստաթղթերի համապատասխան որակ ստանալու համար: Ըստ դրա գրունտների լաբորատոր փորձարկումները պետք է դառնան հողային աշխատանքների անբաժանելի մաս, որպես ցանկալի որակ ապահովելու երաշխավոր: Հողային աշխատանքների հետ կապված որակական չափանիշեր ստանալու համար տեղամասի տեխնիկական հսկիչը պարտավոր է.

- Ստուգել հաստատված հատակագծերը, մասնագրերը և երկրաբանական հաշվետվությունը
- Կատարի նշումներ շին հրապարակում աշխատող շինարարական տեխնիկայի վերաբերյալ
- Լաբորատոր կամ դաշտային փորձարկումների միջոցով ստուգել հանույթի նախագծային ամենացածր նիշի գրունտների կրողունակությունը
- Լաբորատոր փորձարկումների միջոցով ստուգել հետլիցքի գրունտների դասկարգումը և նրանց համապատասխանելիությունը տեխնիկական մասնագրերի պահանջներին:
- Ստուգել հետլիցքի կամ հարթեցնող շերտի նյութի որակական համապատասխանելիությունը տեխնիկական մասնագրերին, խտությունները և շերտերի հաստությունները (հզորությունները)
- Մասնակցի նմուշառման աշխատանքների և ստուգել որ հողային պաստառի, հանույթի հետլիցքիկամ այլ հանքերից բերված հետլիցքի գրունտների նմուշները առաքվել են նյութերի փորձարկման լաբորատորի

ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ

Լաբորատոր փորձարկումները ներառում են.

- Որոշել գրունտի նմուշների հատիկաչափական կազմը և ստուգել գրունտի այլ հատկություններ, ըստ տեղամասի տեխնիկական հսկիչի կամ Պատվիրատուի պահանջով
- Որոշել գրունտի օպտիմալ խոնավության և չոր խտության կապը կամ այլ փորձարկումներ եթե պահանջվում է
- Դաշտային պայմաններում որոշել հետլիցքի նյութի հտացման աստիճանը
- Տեղամասի տեխնիկական հսկիչի ցուցումներով պարբերաբար ստուգել հանույթի հետլիցքի գրունտի որակական հատկանիշները

ԲԵՏՈՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Երկաթբետոնյա կառուցվածքների բետոնի որակի վրա վրա ազդում են մի շարք գործոններ:

Ըստ դրա որակի հսկողությունը բաժանվում է երկու փուլի.

- Շին հրապարակ բերվող բետոնը ստուգվում ստանդարտ լաբորատոր փորձարկումների միջոցով և ստացված արդյունքները համեմատվում են նախագծային փաստաթղթերի և տեխնիկական մասնագրերի պահանջների հետ
- Բետոնացման աշխատանքների պատշաճ իրականացում և բետոնի խնամք
- Բետոնային աշխատանքների հետ կապված որակական չափանիշներ ստանալու համար տեղամասի տեխնիկական հսկիչը պարտավոր է ստուգել.
- Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի և տեխնիկական մասնագրերի համապատասխանելիությունը, նորմատիվային փաստաթղթերի հետ
- Մասնակցել բետոնի կազմի ընտրության աշխատանքներին ըստ անհրաժեշտության

ՎԻՉՈՒԱԼ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ

Շին հրապարակում որակի տեխնիկական հսկիչը պարտավոր ստուգել.

- Կաղապարների չափերի և ձևերի համապատասխանելիությունը
- Կաղապարների մաքրությունը և խնամքը համապատասխանում են ներկայացվող

- պահանջներին մինչև բետոնի լցնելը կաղապարների մեջ
- Ստուգել շինհրապարակ առաքված բետոնի կոշտությունը
- Ստուգել բետոնի ջերմաստիճանը և այլն
- Բետոնի նմուշառման աշխատանքների համապատասխանելիությունը նորմատիվային փաստաթղթերի պահանջներին

ԱՄՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Երկաթբետոնե կառուցվածքներում օգտագործվող ամրանի շարունակական կամ պարբերական ստուգումները պետք է հավաստեն մատակարարի արտադրանքի համապատասխանելիությունը նախագծային, նորմատիվային կամ տեխնիկական մասնագրերի պահանջներին: Այս աշխատանքները իրականացվում են որակի հսկիչի (վիզուալ դիտարկումներ) և նյութերի փորձարկման լաբորատորիայի հետ համատեղ:

ՎԻՋՈՒԱԼ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ

- Շին հրապարակում որակի տեխնիկական հսկիչը պարտավոր ստուգել.
- Շինհրապարակ առաքված ամրանային ձողերի յուրաքանչյուր խմբաքանակի չափերը և դասը ըստ մասնագրերի կամ նախագծի
- Լաբորատոր փորձարկումների միջոցով ստուգել ամրանների համապատասխանելիությունը ըստ արտադրանքի տեխնիկական մասնագրերում նշվող պահանջներին
- Վիզուալ ստուգել շին հրապարակ առաքված ամրանների մակերևույթները
- Կաղապարներում ամրանացանցերի տեղադրման ընթացքում ստուգել դրանց ուղղությունները, եռակցվող հանգույցները և այլն
- Կաղապարներում ամրանացանցերի տեղադրելուց հետո և բետոնի լցնելու ընթացքում ստուգել, որ ամրանացանցը հատատուն դիրքում է և ամրացված է բավարար չափով

ՄԵՏԱՂԱԿԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐ

- Մետաղական կոնստրուկցիաների դիտարկումները լինում են.
- Դիտարկումներ գործարանում,
- Դիտարկումներ շինարարական օբյեկտում:
- Մասնագիտացված տեխ. հսկիչի պարտականություններն են.
- Ուսումնասիրել հաստատված նախագիծը, մասնագրերի և արտադրական գծագրերը:
- Եռակցումից առաջ ստուգել մետաղական կոնստրուկցիաների հավաքման համապատասխանությունը նախագծին և շինարարական նորմերի պահանջներին, ինչպես նաև եռակցող տեխնոլոգի արտաքին դիտարկման եզրակացության առկայությունը:
- Ուսումնասիրել եռակցման ընթացակարգերը:
- Ստուգել համապատասխան սերտիֆիկատների առկայությունը:
- Եռակցման դիտարկում (կիրառելի է գործարանում և օբյեկտում)
- Ստուգել յուրաքանչյուր եռակցողի վկայականի առկայության:
- Տեսողական զննման կամ չքայքայող փորձարկման միջոցով անընդունելի եռակցման հայտնաբերման դեպքում այդ մասին տեղեկացնել եռակցողին և շին.դեկավարին:
- Ստուգել եռակցման կետերին հարակից կառուցվածքային էլեմենտների հաստության:
- Ստուգել միացումների, ինչպես նաև թեքությունների, եզրային բթացումների, եռակցվող եզրերի միջև տարածության:
- Ստուգել տարբեր միացումների և դիրքերի համար նախատեսված էլեկտրոդների տեսակը և չափերը և դրանց պահպանման վիճակը:
- Պաբերաբար ստուգել յուրաքանչյուր եռակցողի աշխատանքը:

ՎԻՋՈՒԱԼ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

- Այս դիտարկումները ներառում են.
- Ստուգել ուղղման և ծռման ընթացակարգերը:
- Ստուգել կտրված եզրերը:
- Ստուգել հեղույսների անցքերի չափերի համապատասխանությունը: Լրացուցիչ հսկողություն օբյեկտում.

- Քննարկել եռակցման հերթականությունը, ընդհանուր շինարարական պլանները և հատուկ միացումների հերթականությունը կապալառուի և ճարտարագետի հետ:
- Անբարենպաստ եղանակի դեպքում միջոցների ձեռք առնել՝ եռակցման տարածք խոնավության թափանցումը կանխելու համար:

Ներկելը

- Ստուգել մաքրման գործողությունների պայմանների համապատասխանությունը:
- Ստուգել ներկերի և դրանց կիրառման մեթոդի (վրձին, գլորակ, փոշարար) համապատասխանությունը մասնագրերին:
- Ստուգել ներկի յուրաքանչյուր շերտի և վերջնական հաստությունը:

ՔԱՐԻ ԵՎ ԱՅԼ ՏԵՍԱԿԻ ՇԱՐՎԱԾՔ

Այս տեսակի աշխատանքները ընդգրկում են միջնորմերը կազմված տարբեր հաստության բետոնե բլոկներից և այլ ձևերով: Այս աշխատանքների մեջ են ներառված նաև շինության ֆասադային երեսապատումները և այլն:

Շարվածքների հետ կապված ուսումնասիրությունների նպատակն է, ստուգել որպեսզի աշխատուժի պրոֆեսիոնալիզմը և շին հրապարակ առաքվող նյութերը համապատասխանում են մասնագրերի նվազագույն պահանջներին:

Տեղամասի որակի պատասխանատուն պարտավոր է.

- Ստուգել շինհրապարակ բերվող արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատները
- Մասնակել նմուշառման աշխատանքներին և հետևել որպեսզի նմուշները պատշաճ կերպով առաքվեն փորձարկման լաբորատորիաներ

ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ

Ըստ այս տեսակի աշխատանքների բնույթի լաբորատոր փորձարկումները ներառում են.

- Քարի շարվածքների կամ բետոնե աղյուսների որակի ստուգում և դրանց համապատասխանելիությունը տեխնիկական մասնագրերին
- Լցանյութային կամ կապակցող խառնուրդների նյութերի (ցեմենտ, ավազ, անկեռային ձողեր, խիճ) համապատասխանելիությունը մասնագրերին և այլն:

ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ներքին հարդարման աշխատանքները իրենց ծավալով և տեսակով ներկայացված են նախագծային փաստաթղթերում: Այս աշխատանքները իրենց մեջ ներառում են հատակի ցեմենտ-ավազե հարթեցնող շերտերը, պատերի հարդարումը տարբեր տեսակի մածիկներով, գաջի աշխատանքները և այլն:

Այս աշխատանքների իրականացման ընթացքում որակի պատասխանատու տեխնիկական հսկիչը պարտավոր է.

- Ստուգել աշխատող անձնակազմի որակավորումը
- Ստուգել և անհրաժեշտության դեպքում (նյութերի փորձարկման լաբորատորի ուղարկել) հարդարման համար նախատեսված նյութերի համապատասխանության սերտիֆիկատները
- Վիզուալ ստուգել հարդարվող մակերևույթների ողորկությունը և հայտնաբերված թերությունների դեպքում տալ համապատասխան ցուցումներ դրանց վերացման համար:

ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

Այս աշխատանքները իրականացնելու ընթացքում համապատասխան որակավորում ունեցող որակի տեխնիկական հսկիչը պարտավոր է.

- Մասնակցել շին հրապարակ նեմուծված ապրանքների (տարբեր տեսակի խողովակներ և դրանց կցամասեր, օդափոխության համակարգեր, էլեկտրական սարքավորումներ և այլն) հանձնման ընդունման աշխատանքներին

- Ստուգել դրանց համապատասխանությունը նախագծային փաստաթղթերին և տեխնիկական մասնագրերին
- Ստուգել դրանց մոնտաժման աշխատանքների որակական հատկանիշները
- Թերությունների հայտնաբերման դեպքում տալ համապատասխան ցուցումներ

ԷՆԵՐԳԱԿԱՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Այս տեսակի աշխատանքները հիմնականում կապված են շինության արտաքին պատերի ջերմամեկուսացման միջոցառումների հետ, որոնք նախագծվում շուկայում առկա ջերմամեկուսիչ նյութերի օգտագործմամբ:

Այս աշխատանքները իրականացնելու ընթացում, եթե դրանք առկա են տեխնիկական հսկողության իրականացնող մարմնի համապատասխան որակավորում ունեցող մասնագետը պարտավոր է.

- Ստուգել նախագծային փաստաթղթերում էներգախնայողությունների հետ կապված միջոցառումների համապատասխանելիությունը նորմատիվային փաստաթղթերին և դրանց արդյունավետությունը
- Ստուգել շինհրապարակ առաքվող ջերմահաղորդիչ նյութերի ջերմահաղորդականության գործակիցները և դրանց համապատասխանելիությունը նյութերի սերտիֆիկատների հետ

ԱՍՖԱԼՏԲԵՏՈՆԵ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Այս աշխատանքները իրենցից ներկայացնում են շինության հարակից տարածքում նախատեսված բարեկարգման աշխատանքների անբաժանելի մաս: Սրանց թվում են շինության մոտեցնող ավտոճանապարհները, բակային տարածքները, խաղահրապարակները և այլն: Այս տեսակ աշխատանքների հսկողությունը կայանում է ասֆալտաբետոն փոռլ անձնակազմի որակավորման և շիրապարակ բերվող ասֆալտաբետոնը մատակարարող ընկերության արտադրանքի համապատասխանելիությունը տեխնիկական մասնագրերին:

- Տեղամասի տեխնիկական հսկիչը պարտավոր է ստուգել.
- Ստուգել հաստատված գծագրերը և տեխնիկական մասնագրերը
- Ստուգել նյութերի սերտիֆիկատները և դրանց համապատասխանելիությունը

ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ

Տեղամասի տեխնիկական հսկիչը պարտավոր է.

- Մասնակցել լաբորատոր փորձարկումների համար իրականացվող նմուշառման աշխատանքներին
- Մասնակցել ասֆալտաբետոնի կազմի ընտրության լաբորատոր փորձարկումների աշխատանքներին
- Լաբորատոր փորձարկումների տվյալներով ստուգել ասֆալտաբետոնի ծածկի ներքևի հողային շերտերի համապատասխանելիությունը տեխնիկական մասնագրերի պահանջներին և այլն

ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՐԱՖԻԿ

Փորձարկումների և հսկողությունների սահմանման գրաֆիկը պետք է կազմվի Պատվիրատուի և Կապալառուի հետ համատեղ կամ նշվի պայմանագրի հավելածներով կամ այլ ձևերով: Այս փորձարկումների գրաֆիկի կազմումը ուղղակիորեն կապված է շինարարության տևողության և փաստացի աշխատանքների առաջընթացի հետ: Խորհրդատուն փորձարկումների և հսկողության գրաֆիկը կսահմանի ըստ փաստացի աշխատանքների առաջընթացի:

Տեխնիկական հսկողության թիմի կազմակերպումը

Տեխնիկական հսկողության խումբը համալրված է համապատասխան մասնագիտական կրթություն և աշխատանքային հարուստ փորձ ունեցող որակյալ մասնագետներով: Տեխնիկական

հսկողության խումբը կազմված է հիմնական փորձագետներից, ոչ հիմնական փորձագետներից, օժանդակ (տեխնիկական աջակցության) անձնակազմից և վարչական աջակցության անձնակազմից: Տեխնիկական հսկողության խմբի կազմը հետևյալն է՝

Հիմնական անձնակազմ

- Շինարարության տեխնիկական հսկողության խմբի ղեկավար
- Տեղամասի պետ
- Որակի վերահսկման և նյութերի փորձարկումների ճարտարագետ
- Նախագծման և շինարարական նյութերի մասնագետ
- Դաշտային տեսուչ (ճարտարագետ-շինարար 1 մարդ)

1. Մ. Օհանյան

- Դաշտային տեսուչներ(ճարտարագետ-էներգետիկ 1 մարդ)

1. Մ. Զաքարյան

- Դաշտային տեսուչներ(ճարտարագետ-էլեկտրիկ 1 մարդ)

1. Է. Վարդապետյան

- Դաշտային տեսուչներ(ճարտարագետ-հիդրոտեխնիկ 1 մարդ)

1. Ա. Աբգարյան

Ոչ հիմնական անձնակազմ

- Գեոդեզիստ

Օժանդակ անձնակազմ

- Համակարգչային օպերատոր

Վարչական աջակցության անձնակազմ

- Փոխտնօրեն
- Հաշվապահ

բ) Աշխատանքային պլան

Խորհրդատուն իր ծառայությունների մատուցման նախնական փուլում Պատվիրատուի կողմից տրամադրած բոլոր նախագծային նյութերը և գծագրերը մանրակրկիտ ուսումնասիրելուց հետո յուրաքանչյուր տեղամասի համար կնշանակի տեղամասի պետ, որի ղեկավարության տակ կլինեն դաշտային տեսուչներ: Տեղամասի պետերի և դաշտային տեսուչների հետ սերտ համագործակցությամբ կաշխատեն և անհրաժեշտ օգնություն կցուցաբերեն նաև նյութերի որակի վերահսկման և նյութերի փորձարկումների ճարտարագետը և նախագծման և շինարարական նյութերի մասնագետը:

